

ՆԱՌԻ ԶԱՐՅԱՆ

ԿԱՆԿԱԿԱՆ



891.995
2-39

ԼՈՒԲՅԱՆՍ

30 MAY 2011

891.990.

2 - 39

ՆԱԻԻ ԶԱՐՅԱՆ

ԱՐ

Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն

Նկարները Մ. ԲԱԳԳԱՍՅԱՆԻ

☆ Լ Ո Ւ Ս Ն Բ Ո Ս ☆

ԹԵՐԵՎԱՆ


1940

17 APR 1943


8452



Պապա, բեր ինձ սավառնակ,
 Տաք վերարկու և գլխարկ:
 Չես հասկանում, թե ինչու:
 Պիտի դառնամ ուղաչու,
 Քրոչեմ անուշ հովերով,
 Անցնեմ անափ ծովերով,
 Հասնեմ սրբոխ փափագին,
 Տեսնեմ լեռին պապիկին:
 Պապա, ինձ չես ճանաչում:
 Յես դառել եմ ուղաչու:



1880
40



Ռումիկը նըստեց
 Պապայի ծընկան.
 — Պապա, կըլըսե՞ս.
 Պատմեմ քեզ մի բան,
 Շատ հետաքրքիր:
 Պապան, թե՛ պատմիր,
 Յերկար ե, թե կարճ:
 — Յերկար ե, պապա,
 Դու լըսիր հապա.
 Ձի լինում մի արջ...
 — Հետո, ի՞նչ յեղավ,—
 Հարցըրեց պապան:
 — Հեքյաթը պըրծավ,—
 Փպտաց յերեխան:



Մամա, ասում եմ՝ բարև.
 Հոկտեմբերիկ եմ դառել:
 Նըկարել եմ ողանալ,
 Համ պոչ, համ քիթ, համ թևեր:
 Մամա, ինչքան մեծանամ,
 Վոր ինձ ասես՝ պիտներ:

Յես արդեն մեծ եմ, մամա,
 Քաջ պիտներ եմ դառել.
 Թըմբուկ ունեմ յես հիմա,
 Սովորել եմ փողհարել:





Դաս եմ սերտում ամեն ժամ
 Ձրմըշկում եմ, խաղում հոյ,
 Մամա, ինչքան մեծանամ,
 Վոր ինձ ասես՝ կոմսոմոլ:


Մամա, յես մեծ եմ արդեն,
 Կոմյերիտ եմ իսկական:
 Թող ինձ վախկոտ չըկարծեն.
 Ունեմ յես մեծ հրացան:

Կարմիր բանակ եմ գնում
 Բուրժուալի դեմ կռվելու,
 Քեզ ել նամակ եմ գրում,
 Գրնացել եմ շատ հեռու,
 Պոստում կանգնած եմ անահ,
 Ձեռքրս պինդ ե, դեմքրս՝ խիստ...
 Մամա, ինչքան մեծանամ,
 Վոր ինձ ասես՝ կոմսոմոլիստ:



— Յնւմ, ցնւմ, ցնւմ, ցնւմ...
 Մամա, յես քաջ եմ, տես.
 Մուկ եմ տեսել խոհանոցում,
 Ձեմ վախեցել, գիտե՞ս:





Հոփ, յելա յես, դու ընկար,
 Հոփ, յելար դու, յես ընկա.
 Հոփ... ինչ լավ ե, ինչ ուրախ ե
 Այս մեր խաղը—հեծնկա:

Հոյ... խաղողն եսոր քաղում են,
 Յերգ ու բերգ ե մեր այգում,
 Աշխատում ու ծիծաղում են,
 Ծուլլերին ծաղրում, ծակում:

Կա այգում մի մեծ գերան,
 Բարդենու մի ձող վրան,
 Մի ծայրին նստել եմ յես,
 Մյուս ծայրին ել դու յես, տես:

Հոփ, թուա յես, դու ընկար,
 Բարձրացար դու, յես ընկա,
 Ձան, ինչ լավ ե, ինչ ուրախ ե,
 Այգեքաղն ու հեծնկան:





(Ըստ Միխայիլովի)

Այս պատահեց մեր քաղաքում
 Մի յերեկո, մի տան բակում:
 Մեկը հեծել էր փայտե ձին,
 Մեկը նայում էր փողոցին,
 Վաստն սուլիչ էր փչում,
 Վաչոն վոտքերը ճոճում:
 Վալոդիկը լուռ նստել էր,
 Ելլան փաթաթում էր թելը,
 Ասոն յերգում էր մի յերգ:
 Վալոդիկն ասավ,—տղերք,
 Իմ զրպանում կա մի մեխ,
 Իսկ ձերը...

— Իսկ մեր հյուրն էլ ունի բեխ,
 Իսկ ձերը:

— Իսկ մեզ մոտ էլ մեր կատուն,
 Չագեր բերեց յերեք հատ:
 Չագերը բան չեն ուտում,
 Վոչ մուրաբա, վոչ էլ կաթ:

— Իսկ մեր լույսը հանգավ յերեկ-
 ես՝ քեզ մեկ,
 Մամաս զրնեց վերարկու,
 Ես՝ յերկու:




Իսկ շորրորդը՝ իմ մաման
 Մավառնակով կթռչի,
 Վորովհետև իմ մաման
 ողաչուլ յե, վախկոտ չի:
 Զարոն հուզված վեր յելավ:
 — Ողաչուլ յե մամադ,
 Կավ:

Իսկ իմ մաման մեր քաղաքի
 Միլիցիոններ ե ուղղակի,
 Մոսի, Մոսու մամաները
 Յերկուսն էլ ինժեներ են,
 Սեդիկն ասավ—իմ մաման
 Բոլորից էլ կարևոր ե,
 Վորովհետև իմ մաման,
 Տրամվայի կանդուկտոր ե,
 Մինչև մաման զանգ չտա,
 Տրամվայն առաջ չի գնա:
 Կամաց խոսում ե Հայկունին:

— Միթե վատ ե դերձակունին:
 Ո՞վ ե կարում շորեր նախշուն:
 Դե, ի հարկե, վոչ ողաչուն:
 Ողաչուն թռչում ե վերը,
 Այդ շատ լավ ե գեղեցիկ,
 Տուն ե շինում ինժեները,
 Այդ էլ ե շատ գեղեցիկ:
 — Մեզ բուժում ե բժշկունին,
 — Դաս ե տալիս ուսուցչունին:


Յեվ բոլորիս էլ մաման
 Կարևոր ե, պետքական:
 Այստեղ վեճը վերջանում էր,
 Տղերքի բունն էլ տանում էր:





Յեւ կդառնամ անվախ մարդիկ,
Մկաններով ամուր ու ձիգ:
Փողոց կեղնեմ դրոշակն առած
Շարքերի մեջ կերթամ առաջ:

Տրիբունի մոտ—ձայնով խրրոխտ
— Բարե,—կասեմ, Մեծ Առաջնորդ:



(Մարշակից)

Են ի՞նչ անցորդ ե քայլում
Փողոցներով քարած,
Մորթը կարմիր ու փայլուն
Գըլուխը բաց արած:

Բարակ շապիկը հագին,
Շալվարները կարճ,
Քայլում ե նա, ձախ կողքին
Թիթեղե մի փարչ:




Տես ինչ աշխույժ ե գընում,
Տես ինչ կարճիկ ե նա.
Տրամվայր կանգ ե առնում,
Մինչև նա անց կենա.

Նա վողջ բրունել ե ճամբան,
Ասես փիղ ե մի.
Լրսում եք, թե նա ինչքան
Անուկներ ունի—

Սուրիկ ե նա,
Սաշիկ,
Սաթիկ
ու Արտաշիկ,
Գետրոս ու Յլեքսան,
Կիմիկ, Սիմիկ, Սուսան,

Փրիզրիս ե նա, Յրտիկ,
Լիզիկ, Լուրիկ, Սըմբատ.
Յեվ այդ խմբին մարդիկ
Անվանում են ջոկատ:

Ասեք. այն ո՞վ ե, այն ո՞վ,
Դաշտում, գետի մեջ.
Այրվում ե բարկ արևով
Ամբողջ որ անվերջ:



Շիկացել են ուսերը,
Ինչպես վառ հընոց,
Թուջից ել պինդ ու սև են
Մեջք ու պարանոց:

Ո՛ւր ե շապիկը հագին,
Ո՛ւր ե շալվարը կարճ.
Ինչո՞ւ նրա ձախ կողքին
Զրկա թիթեղե փարչ:

Շողից վառված իր կաշին
Միակ շորն ե իր հագին,
Այդ ե ամեն ինչ
Յեվ ուրիշ վոչինչ:

Տես, բաց ամպի տակ
 Կըտավե քաղաք.
 Քամին կատաղում,
 Քաղաքն է զողում:




Գործի յեւրով յեռանդով
 Մի անգամից հարյուր ձեռք:
 Տարածվում է մի վերստով
 Աշխատանքի հեք:

Նա մարգարաշտ յեւրով,
 Տես,
 Վոր խոտ հնձի,
 Շինի դեզ,

Բոլորովին կանաչ խոտ,
 Ծնկին հասնող
 ու ծաղկոտ,
 Մեջը կապույտ տերեփուկ,
 Ապրեմ-չապրեմ, յերեքնուկ:
 Մարդիկ նայում են, ասում.
 Զոկատն է այդ աշխատում:

Ի՞նչ նավատորմ է,
 Տեսեք.
 Գետում լողում է նա սեզ:
 Մակույկներում սրբաքիթ




Նավորդները մերկ ու խիստ:
 Մի հրամանով ութը ձեռ
 Վայր են թողնում թիակներ,
 Զուրը ճողփում են ուժգին,
 Նոր թափ տալիս ընթացքին:

1880
 40



Մի հորանջիր ղեկակար,
Առաջ նայիր անայլայլ,
Շատ մի շարժիր դու լեզուդ,
Նավըդ կընկնի ավազուտ:

Ի՞նչ գլուխներ են այն, տես,
Գետի մեջ լողում,



Ո՞վ է ձեռքերն իր այնպես
Թափ տալիս հեռվում,
Ի՞նչ աղմուկ է,
Հրրմըշտոց,
Ի՞նչ քրքիջ ու փրուրշտոց:
Մարդիկ աչքով են անում.
Չոկատն է այդ լողանում:



Նորից յեկավ կարմիր Բեռին,
Անունը Մեծ Հոկտեմբեր:
— Վողջույն, — ասավ, — մանուկներին.
Բերել եմ լավ նըվերներ:
Նոր ողավետ մանկապարտեղ,
Նախաճաշիկ շատ առատ,
Խաղալիքներ, խաղեր պես-պես,
Չորահանդես ու պարտո:
Բերել եմ ձեզ անուշ հեքյաթ,
Գիրքը կարմիր՝ Լենինի,
Վոր ձեզ համար պատմեմ ազատ,
Ձեր միտքը սուր, վառ լինի:
Բեռի Ստալինն էլ է ճամբել
Ենքան բարեփ, ենքան բան,
Սովառնակներ, ձիեր, թամբեր,
Ավտո, արակտոր ու կոմբայն,
Սիրուն շորեր, տաք վերարկու,
Վոր լավ հագնեք, չըմըրսեր:
Հայր Ստալինն ենքան հարգում,
Սիրում է ձեզ, յերեխեր:
Վոր իմանաք, Լենին պապին,
Ձեզ ինչքան շատ եր սիրում,
Շատ եր խոսում նա ձեր մասին
Իր մեծ կյանքում, գործերում:

Նա ձեզ համար ինձ կոչ արավ.
 «Յե՛ր, Հոկտեմբեր, աշխարհ յեկ,
 Անցիր հյուսիս, անցիր հարավ,
 Արևմուտքից—արևելք,
 Նոր կյանք տար իմ մանուկներին,
 Նոր յերգ, նոր խաղ ցանկալի»
 Յես ե՛ր, անա, ամեն տարի
 Այցելու՞թյան եմ գալիս:

Յե՛վ յերեխեք Հոկտեմբերին
 Պատվի առան շատ յերկար:
 Ասին.—«Բարև, բարև, Քեռի,
 Ինչ լավ արիր, վոր յեկար:
 Մենք ել եյինք շատ անհամբեր
 Քեզ ամեն որ ըսպասում
 Պատրաստ պահած լավ նըվերներ
 Քաղաքներում, կոյսոգում:

Դե նայիր մեր նըվերներին,
 Տես ինչ լավն են, ինչ անատ:
 Ինքըդ եսպես կանգնիր, Քեռի,
 Մենք կանգնենք քո առաջ»:



— Կառվենն եմ յես, ծանոթանանք—
 Լավ հանքափոր եմ, Քեռի:
 Բերել եմ քեզ պղղընձահանք
 Չանգեզուրի հանքերից:

— Յես ել Աղվան Կառվենն եմ, տես,
 Հարվածալին եմ շիտակ:
 Բոյուք Վեդուց բերել եմ քեզ
 Բամբակ առատ, ըսպիտակ:
 Յես եմ պահել, խնամք արվել,
 Ընդդեմ չորի ու չորի,
 Վոր քո տոնին տամ քեզ նըվեր:
 Հավանեցիր, Մեծ Քեռի:



Յես բազմեցի հերոս Կառվեն
 Բազվի բանվորն եմ, Քեռի:
 Կատարեցի իմ պըլաններն
 Ու քեզ առատ նավթ բերի:

— Յես ել Կառվենն եմ վըրացի.
 Քե՛լ եմ բերել, Քեռի, տես:
 Յես անկեցի, խընամեցի,
 Վոր քո տոնին—բերեմ քեզ:





— Բարև, Քեռի, Լենան եմ յես,
Արտաշատի կոլխողից:
Ես խաղողի վողկուլը տես,
Հենց նոր պսկել եմ վազից:
Սարջի յե սա, ենքան անսւշ...
Իմ խընամածն ե գիտէս:
Ա, Մեծ Քեռի, չէս իմանում:
Կըչաղանաս, վոր ուտես:


— Վահ, իմ անունն ել ե Լենա:
Յես քրրդուհի յեմ, Քեռի:
Հենց վոր գառներն արտա յերան,
Աչքըս դըրի ես գառին:
Ասի՛ պահեմ բոլորից լավ,
Բուրդը սանրեմ, լողացնեմ,
Հենց վոր աշնան Քեռին յեկավ,
Առնեմ գընամ նրա դեմ:



Եսպես յեկան յերեխաներն
Ամեն ազգից, շըրջանից,
Բերին Քեռուն պես-պես բաներ
Ու յերգեցին յերջանիկ.
«Մենք բոլորըս քաջ և արի
Մանուկներն ենք Հոկաեմբերի.
Հայ ու աղվան, վիր, ասորի,
Սիրում ե մեզ Ստալին Քեռին:

Մենք ել իրար շատ ենք սիրում
Ռուսին, վրացուն, ասորուն,
Հայն—աղվանին, քուրդը—հային—
Յեղբայրութուն միջազգային:

Շատ գոհ մընաց Կարմիր Քեռին,
Գովեց խելոք մանուկներին,
Նըվերները դուրս հանեց
Ու բոլորին բաժանեց:






ՌԴԱՉՈՒ ՀԱՆՐԻՆ

(ՀԵՔՅԱԹ)

1.


Բուրժուան ասով բանվորին,
 — Յեկ, ինձ համար տուն շինի,
 Բեզ փող կտամ տուր շորի,
 Հացի, պանրի, թութուռի:
 Բանվորն ասով մուրճ, ջրունդ
 Ու բուրժուալին տուն շինեց,
 Իսքը մնաց իր փլուկ,
 Մութ ու խոնավ քնջի մեջ:
 Բանվորն ասով բուրժուալին.
 — Դե, ինձ փող տուր, գնեմ հաց.



Բուրժուան ավեց հինգ շալի,
 Բանվորն առավ ու զրնաց:
 Գրնաց շուկա, հաց առեց,
 Փողը պրծավ զբրպանի:
 Բանվոր պապան շվարեց.
 «Բա շնր, շաքար, բա պանիր...»
 Յամաք հացը բերավ տուն,
 Աղալին, Հանրիկին:
 Կերան ամին՝ ելի տուր,
 Հաց յեղան ու քրնեցին:

2.

Բանվոր պապան առավառ
 Գնաց բուրժուա տիրոջ մոտ.
 Չեռքը դրած մեծ փորին
 Ասավ բուրժուան բանվորին.
 — Յեկ, ինձ համար գործ արբա,
 Շինիր մի մեծ գործարան.
 Փող տամ՝ հաց առ խանութից,
 Վոր չըմնաք անոթի:
 Բանվորը բահ-մուրճ առավ,
 Գիշեր, ցերեկ, հա բանեց,
 Շինեց մի մեծ գործարան,



Բուրժուան տեսավ, հավանեց:
Բայց նա ելի բանվորին
Տվավ չնչին որովարձ.
Բանվոր պապան բազարից
Գնեց միայն ցամաք հաց:

Յերբ վոր պապան յեկավ տուն,
Հանրին ասավ կիսաքուն,
— Պապա, տեսա յես ելի
Եդ բուրժուայի Աբելին,
Նա կանգնած եր հայաթում,
Հաց ու կարագ եր ուտում:
Պապա, կարագ եմ ուզում:

— Մամա, — ասավ Աիդան, —
Յես ել տեսա բուրժուայի
Պուճուր սիրուն աղջկան:
Հագի շորերը ենքան
Սիրուն եյին, պապղան:
Նա շորն սկի չի՞ ճղում:
Մամա ինձ ել ես տարի:
Եդպես սիրուն շոր կարի:

Տխրեց մաման,
Տխրեց պապան.
— Ի՞մ բալիկներ,
Դուք վե՛նց կարաք
Նոր շոր հագնել,
Ուտել կարագ,
Բուրժուան քիչ է փող տալիս,
Յամաք հաց ել չի դալիս:
Կացին Հանրին, Աիդան
Ու խրոսված քուն մտան:

Բանվոր պապան վաղ առավոտ
Գնաց ելի բուրժուայի մոտ:
Չեռքը դրած արուղ փորին՝
Ասավ բուրժուան մեր բանվորին:
— Արի մտի ի՞մ գործարան,
Գիշեր բանիր, ցերեկ բանիր.
Աշխատավարձ կտամ, տար առ
Կուղես — կարագ, կուղես՝ պանիր:
Բանվոր պապան վաղ առավոտ,
Գոգնոց կապեց, մտավ դավոդ:

Գիշեր բանեց,

Յերեկ բանեց

Ու բուրժուայի համար շինեց

Գնացք,

Ավտո,

Այրուղյան,

Նավ,

Տրամվայ,

Ելեքտրոլամպ,

Թաղիտ,

Տրակտոր,

Մաշին,

Մատու:

Յերեկոյան շատ հոգնած,
Չեռքին ելի ցամաք հաց,
Գործարանից տուն հասավ,
Հանրին վաղեց ու ասավ,
— Պապա, յես տեսա այսոր մեր թաղում,
Բուրժուայի Աբելն ավստ յեր խաղում,
Չեռքին ել ուներ մեծ անրուղյան:
Շատ լավն եր, պապա, մտաեցա նրան,



Վոր մի լավ նայեմ, բայց նա բղավեց,
Չեռքի մտրակով քամակըս դաղեց:
Պապա, կարո՞ղ եմ յես ավտո քշել:
Չե, չե, ողաչու կղանումս յես ել:

Պապա ջան, գնա,
Բեր ինձ ողանավ,
Դառնամ ողաչու,
Բարձրանամ վերև
Ու վոնց վոր թռչուն
Թռչեմ գործարան,
Քեզ թևիս առած
Թըոցնեմ բերեմ:

— Մամա ջան, — առավ սիրուն Ախթան,
Տեսա բուրժուալի պուճուր աղջրկան:
Ուներ յերկու հատ մեծ-մեծ կուկլաներ,
Կուկլա յեմ ուզում, մա, ինձ կուկլա բեր,

Տխրեց մաման:
Առավ պապան.
— Իմ բայիկներ,
Յես չեմ կարա
Գնել եղբան
Խաղալիքներ,
Վորովհետև —

Յես բանվոր եմ. առացի,
Մուրճ եմ զարկում հա սալին,
Վոր փող ձարեմ սև հացի,
Են ել բուրժուան չի տալիս:
Հանրին խոսքը վերցրեց.
Ու պապային հարցրեց.
— Պապա, ավտո, աերոպլան
Դո՞ւ յես շինում, թե՞ բուրժուան:
— Յես եմ շինում, Հանրի ջան:

— Վոր դու յես շինում,
Բաս ո՞ւր ես տանում
Բուրժուալին տալի,
Դե ինձ տուր, ելի:
— Իմ անուշ բայիկ:
Բուրժուան ինձանից խլում ե, տանում
Յես նրա համար փողով եմ բանում:
— Խլում ե, դու ել նրանից խլի —
Պատասխան տվավ քաջ Հանրին ելի:
— Խլե՞մ... կխլեմ, — խոստացավ պապան: —
Քնեցին ուրախ Հանրին, Ախթան:

4.

Մյուս առավոտ Հանրիկի պապան
Չգնաց զավոր:
Գործադուլ արավ, նստեց իրենց տանն
Յերեխեքի մոտ:
Բուրժուան կանչեց բանվորին,
Չեռքը դրեց մեծ փորին.
Բաս՝ չէս բանում:
— Լավ եմ անում,
Բա վոր քիչ ես փող տալիս,
Իմ յերեխեք,
Սոված ու մերկ
Հաց են ուզում ու լալիս:
Քո յերեխան
Ունենա տուն,
Ավտո, կուկլա, այրոպլան.
Իսկ իմ Հանրին,
Իմ Ախթան
Բան չունենան, մորմոր լնն:
Տուր ինձ այնպես որավարձ,
Վոր համ առնեմ առատ հաց,

Համ կաթ, շաքար, համ պանիր,
Թե չե բսկի չեմ բանի:
Հանրուն պետք ե ողանավ,
Աիդաջին կուկլա լավ:
Պահանջս ես ե, չես անի,
Քո գավոգում չեմ բանի:
Բուրժուան բանվորին լրսեց մի առ մի,
Բարկացավ, կանչեց իրեն ժանդարմին.
Ժանդարմը յեկավ բանվորին զարկեց:
Ձեռքերը կապեց, տարավ բանտարկեց:
Այդ յերեկոյան
Հանրին, Աիդան,
Սպասում եյին
Իրենց պապային,
Վոր դար ու բերեր
Կուկլա, ողանավ
Ու սիրուն շորեր
Ֆարբիկից հանած:
Բայց պապան չեկավ:
Շատ բսպասեցին,
Արդեն մութն ընկավ,
Համպը վառեցին,
Իրոան նայեցին:
Ու չեկավ պապան:
Յերեխեքն այնքան
Բարկացան, լացին
Ու նստած տեղում
Քնած մնացին:

5.

Հերոս Հանրին վաղ առավոտ
Շուտ հագնելուց, զընաց զավոգ.

Տեսնի պապան ինչ ե անում
Ամբողջ գիշեր գործարանում:
Ճանապարհին
Տեսավ Հանրին
Իրեն ծանոթ
Ընկերներին.
— Բարե, աղեք, ուր եք գնում,
— Մենք գնում ենք գործարան:
Մեր հայրերին գիշեր քնում
Բռնոտեցին ու տարան:
Պսանք տեսնենք ինչ են անում
Բանվորները գործարանում:
— Իրնանք,—ասավ հերոս Հանրին
Մեր հայրերին ոգնության:
Յերեխաները սիրտ առին
Ու քաջ Հանրուն միացան,
—Տղեք, տեսեք,—ասավ Հանրին,—
Մենք մի խումբ ենք, մի բանակ,
Շարքով զնանք, փոր թշնամին
Մեր բանակից վախենա:
Յերեխաները կանգ առան,
Կազմեցին շարք ու պառաղ,
Հրամանատար դառավ Հանրին
Ու հրամայեց, «Վսշտ, առսջ»:
— Տղեք,—ասավ մի յերեխա,—
Բաս զըրոշակ չունենանք,
Վոր չիինի, յես չեմ խաղա
Վոչ գործադուր, փոչ բանակ:
Այդ ժամանակ հերոս Հանրին
Կարմիր փողկապն արձակեց,
Կապեց բարակ փայտի ծայրին
Ասավ.—«Իրոշակ, ահա քեզ»:

Չեռբին կարմիր դրոշակն առած
Հանրին ընկավ գորբի առաջ.
— Մեկ-յերկու,
Մեկ-յերկու,
Չախ—
Չախ,
Չախ,
Մենք բուրժուայից,
Նրա սղայից
Չունենք յերկջուղ,
Չունենք վախ:
Գնանք ոգնենք բանվորին,
Տանք բուրժուայի հաստ փորին:
Եսպես անվախ յերգելով
Հանրին իրա գորքերով
Հասավ մինչև գործարան,
Կազմ ու պատրաստ կանգ առան:
Գործարանի դռան վրա,
Մեծ հրացան ուսին զըրած՝
Կանգնած եր այդ
Ժանդարմը վատ,
Փորը կտր,
Բեխը վոլոր:
Յեզ նա չթողեց, վոր մտնեն գավոր,
Վոր գնան բանվոր պապաների մոտ:
— Մենք պիտի տեսնենք մեր պապաներին
Թույլ տուր,—բղավեց ղեկավար Հանրին:
— Ձեր պապաներին բանտ եմ տարել յես
Ու զըռան զրել յերկաթե կողպես:
Կորեք լակոսներ, թե չե կթակեմ,
Պապաներիզ պես ձեզ կբանտարկեմ՝
— Չենք վախենում քեզանից,—
Պատասխանեց քաջ Հանրին,

Ոչեց ճարպիկ հարվածով
Հրացանը ժանդարմից:
Ու հրացանը ձեռքերին,
Պեժ ու կայծակ աչքերին՝
Բանտի վրա վաղեցին,
Հրացանով զարկեցին,
Բանտի դուռը շարդեցին,
Պապաներին դուրս բերին:
Կեցցե հերոս, քաջ Հանրին:
Հերոս Հանրին ու պապան
Իրենց ընկեր, հարևան
Բանվորներին միացան
Ու միասին
Հարձակվեցին
Բուրժուա—տըզին
Սպանեցին
Ու խլեցին
Տուն,
Գործարան,
Մուրճ,
Մեքենա,
Ավտոմոբիլ,
Գնացք
Ու նավ,
Աերոպլան,
Ռադիո,
Տրակտոր,
Մաշին,
Մատու,
Կինո,
Նկար,
Ինչ կար, չկար:

Կեցցե՛ պապան,
Կեցցե՛ Հանրին.
Հերոսական
Կռիվ արին.
Նոր կյանք բերին
Մեծ ու կարմիր
Հոկտեմբերին:

6.

Պապան Հանրիկին այդ յերեկոյան
Նվիրեց մի մեծ աերոպլան:
Հանրին սովորեց, ողաչու դառավ,
Նստեց աերոպլան ու լերկինք թռավ:
Հանրին իրեն ողանավով
Իր պապային տարավ զավող,
Իր մամային տարավ դպրոց,
Աիդային՝ մանկապարտեզ,
Տատիկին ել՝ հիվանդանոց:


7.

Բուրժուալի տղան կուզեկուզ փախավ,
Ու լեղապատառ Յեվրոպա հասավ:
Ասավ այնտեղի չար Փաշիստներին.
— Ոգնութեան հասեք, սանահեր, քեռի:
Մեծ հոկտեմբերի քսան և հինգին,
Բանվորը յելավ՝ հրրացան ձեռքին,
Կատարեց կարմիր հեղափոխութիւն,
Հորս սպանեց իրեն պալատում:
Մեր տունը խլեց,
Զավողը խլեց,
Գնացքը խլեց,
Մեքենաները,
Աերոպլանը,

Բանվորն և տերը
Հիմա մեր տանը:
Գնանք միասին,
Մյդ անաստվածին
Զարկենք, սպանենք
Ու պնչից հանենք
Գործարան ու տուն:
Թե չե ետեղ ել
Զեր բանվորները
Կանեն գործադուլ,
Հեղափոխութիւն:
Տաշիստները վախեցան,
Ողանավերը հեծան,
Բուրժուալիկին միացան
Յերկինք թռան ու յեկան:
Ողաչու Հանրին
Նստեց ողանավ
Ընկերների հետ նրանց դեմ յելավ:


Ո՞վ և հասել ամպերին,
Ո՞վ և աստղերը համրում:
Կարմիր աստղը կա Հանրու
Ողանավի թևերին:
Իսկ բուրժուալի այրոպլանն
Ունի կրծքին սև նշան:
Ի՞նչ են ուզում բուրժուաներն,
Ո՞ւր են յեկել մեզ վրա:
Վոր բանվորին սպանեն,
Խլեն հող ու գործարան:
Հանրու արյունը լեռաց
Յեվ սկսեց պատերազմ:

— Բում-բում-բում, դում-դում...—
 Ճախրում է ոդում
 Ողաչու Հանրին
 Ու բոմբ է նետում
 Աերոպլանից:
 Նետում է անշեղ
 Քշնամու վրա:
 Պայթում են աչնտեղ
 Բոմբերը նրա:
 — Դում-դում-դում, բում-բում...
 Ողաչու Հանրին
 Տվեց մի բոմբով
 Բուրժուալի ազի
 Սև ողանավին:
 Սև ողանավում
 Հրդեն բռնկվեց
 Բուրժուան կործանվեց:
 Դում-դում-դում, բում-բում...
 Քաջ Հանրին բոմբով
 Չարկեց բուժուալի
 Մյուս ողանավին:
 Հրդեն բռնկվեց
 Են ել կործանվեց:
 Դում-դում, բում-բում,
 Ամպերն ամբողջ
 Հանրու ճակատն են պաշում:
 Կեցցեն Հանրիկ,
 Եսքան ճարպիկ,
 Եսքան ել քաջ ողաչու:
 Բուրժուաները
 Ես վոր տեսան,



Վախեցան,
 Առան ավեր
 Ողանավերն
 Ու փախան:
 Բանվորի յերկիրն
 Ազատվեց կրկին:
 Զավոզը մընաց
 Բանվոր հայրիկին,
 Ողանավ, գնացք՝
 Հերոս Հանրիկին:
 Կեցցե բանվորի ձեռքը հաստաառն,
 Կեցցե քաջ Հանրին, հերոս ողաջուն:

1932 թ. հոկտեմբեր
 Լենինգրադ



(Հայկական հեքիաթ)

Ոձը դիմեց մի որ ձրկան.
 «Մենք ցեղակից ենք իրար,
 Արի ապրենք միշտ բարեկամ,
 Յեղբայրանանք դարեդար:

Այնպես խաղա՛ղ. այնպես անվե՛ճ,
 Այնքան սիրով, անբաժան,
 Վոր յերանի տա մեզ անվերջ,
 Ամեն սողուն ու գազան:

Ահա յերզվում եմ յես անամպ
 Անապատի սուրբ հողով,
 Իմ նախահոր իմաստությամբ,
 Յեղեմական խնձորով,

Վոր քեզ յերբեք յես չեմ դավի,
 Քեզ չեմ խարի վատարար:
 Յես հաշտության եմ ծարավի...
 Դու ել յերզվիր, ձուկ յեղբայր»:

Ձուկը խոսեց հեզ ու ժպտուն.

— Կամքըդ լինի, հզոր ոճ,

Ձուկն ինչ կուզե—խաղաղություն,

Ծովի ազատ որորոնց:

Յե՛վ ոճն ասավ. «դե, իմ յեղբայր,

Ինձ այժմ ան քո մեջքին,

Ծովի կապույտ խորքերը տար,

Շրջենք սիրով միասին:

Ու փաթաթվեց յեղբոր վրդով,

Ողակ-ողակ ամրացավ:

Ձուկը ճողվեց ալիքը զով,

Առաջ լողաց ինչպես նավ:

Ծանր եր ծովի ազատ վորդուն

Կրել այդ բեռն անագին,

Բայց նա լողում եր անծպտուն;

Հավատարիմ իր ուխտին:

Թափեց արևը հուր, գոհար

Ծովի լանջին դյուխական.

Ոճը հուզված եր, խանդավառ,

Յե՛վ նա խայթեց իր ձրկան:

— Յեղբայր, ինչու ինձ խայթեցիր,

Ձուկը մեղմիկ մրմնջաց:

Պատասխանեց ոճը—«ներիր,

Սխալվեցի յես հանկարծ»:

Յե՛վ ձուկն անձայն շարունակեց

Տանել իր բեռն ոճային:

Ոճը նորից նրբան խայթեց

Ավելի խոր և ուժգին:

— Վայ, խայթեցիր ավելի խոր,—

Տնքաց հեզ ձուկն ակամա:

Ոճը՝ «Արևն եր մեղավոր,

Կատաղեցնում ե ինձ նա:

Յե՛վ ձուկն ելի շարունակեց

Յեղբայրական իր ուղին.

Ոճը նորից նրբան խայթեց,

Ավելի խոր և ուժգին:

— Յեղբայր,—ասավ ձուկը հուզված,—

Հերիք ե դու ինձ խայթես:

«Պիտի խայթեմ,—ոճը Ֆշշաց,

Իմ բընությունն ե այդպես»:

— Քո բնությունն այդպես ե, հա՛,—

Հնչեց անեղ պատասխան.—

Յես ել քեզ ցույց կտամ հիմա

Իմ բնությունն իսկական:

Յե՛վ ձուկն արագ խորասուզվեց,


Իր հեռ տարավ նենգ ոճին,

Ծովի խորքում նրբան խեղդեց

Ու վեր լողաց վերբասին:

Աստվ.—անա թե ցեղական
 Ինչ բնութիւնն ունեմ յես:
 Ու վերջացավ ոճի—ձկան
 Յեղբայրութիւնն ել այդպես:

1938 թ. հոկտեմբեր
 Մոսկվա



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ողաջուն	3
Հեքլաթ	4
Ինչքան մեծանամ	5
Քաջ Ռոմիկը	7
Հեծնկա	8
Իսկ ձերը	10
Անվախ մարդիկը	12
Ջոկատ	14
Հոկտեմբերն ու մանուկները	19
Ողաջու Հանրին	24
Ռճի և ձկան դաշինքը	39

Գառ. խմբագիր՝ Գ. ՎՍԿԵՐՉՅԱՆ
Տեխ. խմբագիր և սրբագրիչ՝ Մ. ՀԱՅՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20

Մարտի 10
Հոկտեմբերի 10
Բնագրի մեջ
Բոլոր հոդվածները
Հանդիսանում են
Բնագրի հոդվածներ
Հանդիսանում են
Բնագրի հոդվածներ
Հանդիսանում են
Բնագրի հոդվածներ
Հանդիսանում են
Բնագրի հոդվածներ
Հանդիսանում են
Բնագրի հոդվածներ

Գրավիտի լիազոր՝ Բ—1089
Գառվեր 784. Տիրած 3000.

Պետրասի տպարան, Լևոնի 65, Յևրեվան, 1940 թ.

<< Ազգային գրադարան



NL0400058

ԳԻՆԸ 2 ՌՈՒԲ.

8452

ՆԱԻՐԻ ՅԱՐՅԱՆ
ДЕТСКОЕ
Քրոսնաճատ 1940 Կ.